"Եւ 'ի հայրապետութեն Անակերտ Սէր աթոռոյն Էջմիածնի Տեառն Եփրեմայ բարեբար եւ պայազատ Սեզն Աթէկոյ Տեր Հայաստանեայց. Եւ 'ի պտրգութէն Սէր Նեմի Տեան Գաբրիէլի արհի Եպսկի. Եւ 'ի պտրգեն մեծի Պոլսոյ' Տեան Ստեփաննոսի Արկեպի Արհի Եպսի, եւ 'ի միլթեփլիութեն սր եկեղեցւոյս' քիւրքճիւ խանցի Պետրոս ամիրայի. Յամի տեառն 834. եւ մերոյս ՌՄՁԳ. եւ հիճրէթի ١٢٥٠ Մայիսի 31 եւ Սէֆէրի ٥. Յաւուր հրաշափառ սր համբարձմանն' զօրեղ հրավարատկաւ զօրեղ արքային' եղեւ սկսումն քակելոյ 'ի հիմանէն.

"Եւ յորժամ' բրելով հասին 'ի հիմունսն, երեւեցան ծոզմ նշխարք ոսկերաց, որ եւ զնմին անդանօր 'ի տեղիս իւրեանց ամփոփեցին 'ի ներքոյ պարապացն. Բայց գնչխարացն սէյ արտեմայ վկային' որովհետեւ վկայեալ էր եւս 'ի յայլ ազգաց քրիստոնէից զլինիլն 'ի մէջ սր եկեղեցւոյս, քանզի այս մեծ վկայս' նահատակեցաւ 'ի չար յուլիանոսէ 'ի յանդիմա քէքի յամի տեառն 362. եւ զկնի ժամանակի բերեալ եղեւ անտի 'ի Պօլիս, ուր եւ ամփոփեալ են յայս սր եկեղեցւոջ. որ այժմ գտաւ մերձ առ բժշկարար յուսաղբերին' այսինքն այազմային իւրոյ, որ եւ 'ի յայս դեղնագոյն ող զնուենկ պատուական, զոր առեալ պահեցին մեծաւ զգուշութի. Եւ ապա 'ի Յունիսի 26 յաւուր Երկուշաբթի' որ էր տօն սրց մանկանցն բեթղեհէմի, կատարելով պատարագ Հօր մերոյ զկարգ հիմնօրհնէքի, արկին զհիմունսն' եւ սկսան շինել գեղեցկայարմար. Քանզի առաջին շինուածն ունէր զհինգ պատարագամատոյց սր սեղան. յորոց միջինն էր' յանուն սր հրեշտակացս. յաջակողմեանն' սր աձածնի, յահեակկողմ սր մինասայ, եւ 'ի պահարանին սր լուսաւորչի, եւ այլ երկու մատուռ յանուն Թադէոս առաքելոյ. Իսկ այժմ բաց 'ի սոցանէ յաւելան եւս, քանզի յառաջագոյն չկայր, ահա այժմ յաջակողմն մեծ սաճարիս կառուցաւ փոքր եկեղեցի մի յանուն սրց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի. նաեւ դամբարանն սէյն արտեմայ' որ թէպէտ կայր 'ի մէջ սր եկեղեցւոյս, այլ ոչ յայտնի. իսկ այժմ 'ի ներքոյ սր եկեղեցւոյս 'ի նոյն տեղւոջ, որ իջանէ քսան ասք աստիճանս.

"Արդ մեծահանդէս օծումն սորին եղեւ յամի տեառն 1835[1] եւ մերոյս ՌՄՁԴ. Սեպտեմ 8, եւ հիճրէթի ١٢٥١ ճմզլ էվէլի ٤٢.

"Ձեռամբ Պրուսացի տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ պատրիարքի մեծի Պօլսոյս. եւ սկսեալ շինումն սորին' յըսկզմանէն մինչեւ ցօծումն 16 ամիս. Որում փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ եւ Սր Հոգւոյն յաւիտեանս յաւիտենից ամէն.„

* *
*

Սոյն Յիշատակարաններով կ'ամբողջանայ պատմութիւնը Պալատի Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն, որ պատկառելի հնութեան մը գրոշմով եւ թանկագին յիշատակներով օծուն, ոչ նուազ կարեւոր տեղ մը ունի ազգային հին եւ նոր մտաւորական, եկեղեցական ու կրթական շարժումներուն մէջ։

[1] "Պատմ. Հայոց Ա. Պերպերեանի„. էջ 260 եւ 490 եւ "Տարեցոյց Ազգ. հիւանդանոցին„ 1909, էջ 67։

Եկեղեցւոյն աւարտումէն յետոյ նուիրատուանձեր կը փութան հոգալ անոր բոլոր պէտք եղածները. ոմանք՝ սպասները, ուրիշներ՝ կանթեղները, եւ զանազաններ ալ՝ մատեանները։

Եկեղեցւոյն շինութեանը մեծաքանակ կշմինտր նուիրող խասգիւղցնակ Ակնցի խօճա Վահրամի որդին Յակոբ Դպիր, 1634ին կը նստի ընդօրինակել Յայսմաւուրք մը[1], զոր աւարտելէն յետոյ գեղեցիկ նկարներով զայն զարդարելով, եւ կարեւոր Յիշատակարանով մըն ալ զայն կնքելով, կը նուիրէ Ս. Հրեշտակապետին։ Հիանալի գրչութիւն մըն է այն, մեծահատոր թանկագին հնութիւն մը, որ բարեբախտաբար անկորուստ մնացած է ցարդ եւ կը պահուի խնամով Եկեղեցւոյն Գանձատունը

(Շարունակելի) ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

# ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՆԱԳԻՐՆԵՐ Ի ԲՈՒՌՃՈՒԳ

*(Ընդօրինակութեամբ Սոտ. Տէրտէրեանճ Ռուսճուգցւոյ)*

(Շարունակութիւն եւ վերջ)

28.

ՏԱՊԱՆՍ ԱՅՍ Է ՀԱՆԳՍՏԻ
ԱՌՆ ՄԻՈՅ ԲԱՐԵՊԱՇՏՕՆԻ
ԱԻԵՆՑ ՇՕՐՈՒԹԵՑԻ
ԿՈՉՄԱՄԲ ԷՕՐԳԵՊԷԿԻ ՈՐԴԻ
ԱԶՆԻԻ ԻՇԽԱՆ ՄԿՐՏՈՒՄԻ
ՎԱՐՈՒՔՆ ՊԱՐԿԵՇՏ ԵՒ ԳՈՎԵԼԻ
Ի ՉԱՓ ՀԱՍԵԱԼ ՓՈԽԵԱՑ ԱՍՏԻ
ԵՒ ԱՍԱՑԷՔ ՏԷՐՆ ՈՂՈՐՄԻ
(ՌՄԼԲ)

29.

ՆԵՐԿԱՅ ՇԻՐԻՄՍ ՀԱՆԳՍՏԱՐԱՆ
ԱՌՆ ԱԶՆԻՈՅ Է ՊԱՀԱՐԱՆ
ՆՄԱՆԵՑԵԱԼ ՀԱՏՈՅ ՍԵՐՄԱՆ
ԱՆԿԵԱԼ ՅԵՐԿԻՐ ՄԻԱՑՆԳԱՄԱՅՆ
ԱԿՆ ՈՒՆԵԼՈՎ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆ
ՅԱՌՆԵԼ ՓԱՌՕՔ ԱՐԴԻՒՆԱԿԱՆ
ԱՍՏՈՒՐԻ ՈՐԴԻ ԱՆՈՒՇ ԻՇԽԱՆ

[1] "Տարեցոյց Ազգ. Հիւանդանոցին„. տարի 1901, էջ 93։

[2] Մայիս թուին մէջ հրատարակուած 22րդ տապանագրին Հայկ. տարեթիւը "ՌՄՇԷ„ ըլլալու տեղ՝ պիտի ըլլայ՝ "ՌՄԾԵ„։

ԽՄՈՒՏ ՑԱՐԳԱՆՑ ՑԱՑՍ ԳԵՐԵԶՄԱՆ
ԽՆԴՐԷ ՀԱՅՐ ՄԵՐ ՀՈԳՒՈՑՆ ՓՐԿԱՆ
Ի ԹՒԻՆ (ՌՄԽԲ) ԻՆ ՅՈՒԼԻՍԻ Թ· ԻՆ

30.

ԱՅՍ Է ՏԱՊԸՆ ՀԱՆ
ԳՍՏԵԱՆ ՌԱՄԿՑԻ ԱՆ
ՈՒՇԼՆՑ ԱԾԱՏՈՒՐԻ ՈՐԴԻ ԲԱ
ՐՆՊԱՇՏՕՆ ԱՋՆԻԻ ԻՇԽԱՆ ՊԱ
ՐՈՆ ԱԻԷՏԻՆ· ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԱՆԱ
ՆՑ ԿԵԱՆՍ ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ
ՍՈՑՆ ՏԱՊԱՆԻՍ ՏՈՒՔ ԶՈՂՈՐ
ՄԻՍ ԼԻԱԲԵՐԱՆ (ՌՄԼԷ)

31.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍ
ՏԵԱՆ ԳՐԻՔՈՐԻ ՈՐԴԻ
ՌԱՄԿՑԻ ՊԱՐԿԵՇՏ
ԱԲԱՐՈՑ ՀԵԶԱՀՈԳԻ
ՄԱՀՏԷՄԻ ՊՕՂՕՍԻՆ ՈՐ
ՓՈԽԵՑԱՒ ԹՆ (ՌՄԼԵ) ՄԱՐՏԻ Ա·

32.

ԱՅՍ Է
ՏՊՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԱՌ
ՆԱՑԻ ՏՐ ԸՍՏԵՓԱՆՆՈՍ
ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԻԹՎՆ
(ՌՄԼԸ) ԵԻ ԱՊՐԻԼԻ ԻԳ· Ի ՈՐ
ՀԱՆԳԵԱՒ Ի
ԿԵԱՆՍ

33.

Է
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՄՀԻ
ՅԱՐՈՒԹԻՆԻ ՈՐԴԻ
ՅԱԿՈԲԻՆ ՈՐ ՓՈԽԵՑ
ԱՒ ԹՎԻՆ (ՌՄԽԸ)
ՅՈՒՆԻՍԻ Ժ·

34.

Սէնկի Գաարիսաան

Է

Գէնտանէն պաքայէ — օլտու բահիպան
Միւշէրրէֆ էհլի ջամ — պէզաա միննաեան
Թըրպիր մահլեագինտէ — հաճի սանփան
Նօմրի միւտանէթիտէ — պուլմադը նօքսան
Գաղիլէթէ շայան — Քըլըմը քեամիլան
Սինի եթմիշինտէ . — էյլէտի միհման
Նզէլի թագտիրտէ — էտինտի վէթան
Ընճա պիր սէնկ քալտը — իսմինէ նիշան
Եվ քապրինէ նազար — իյլէյէն ինսան
Պիր ֆաթիհա իլէ — իյլէ իւրիշան
սուտի հաղրգաթտէ — օլասըն հէրան
ագըպէթինէ խայր — իյլէսին եզտան

1853 յմի փետրվ· 16
3960 հայոց հոռի 10

35.

Է
ՆՇԱՆ

Կէլ էյ աապէմ տիյնէ պէնիմ ֆիղանըմ
Կիւլշան օլմուշ սէնին կիպի ինսանըմ
Գէլէք վուրտու էճէլ վէրմէզ ամանըմ
Հէփ էթրաֆըմ պուլամատըլար միւնքեա-
նըմ
Տիւնեա ֆանի ալաամամա սէն էյ ճանըմ
Զիրա պուտըր էնճամընտա վէթանըմ
Խօփ սագալ օղլու հաճի կարապետ պիր-
ղատըմ
սինիմ 58 տէ պիր թաշ օլտու նըշանըմ
պիր հայր մեղալ տէյին պանա հէր տայըմ
պունտան մատա եօք տըր սիզէ նիազըմ
Յամի Տեառն 1851
Հոկտեմբեր 21

36.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ
ՇՈՒՄԼԱՑԻ ՄՀԻ ԱՑՏԸՆԻ
ԹՈՒՍՏՐ ՄՀԻ ԱԼԹԸՆԵԱՆՑ
ԸՍՏԵՓԱՆԻ ԿՈՂԱԿԻՑ ՀԱՄ
ԷՍՏԱԲԱՐՈՑ ՍԻՄԱ ԽԱԹՈՒ
Ն· ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԹՎԻՆ (ՌՄԽԴ) ԻՆ
ՕԳՈՍՏՈՍԻ Ա·

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@